ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. սեպտեմբերի 27 թիվ 97 -Ա

ՄԱՐԻՆԱ ՔՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 226-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Պ. Համբարձումյանի 2013 թվականի սեպտեմբերի 26-ի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի << Սուսերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Մարինա Քոսյանի 2013 թվականի սեպտեմբերի 26-ի բացատրությունը՝ ***կարգադրում եմ.***

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սուսերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Մարինա Քոսյանին հայտարարել խիստ նկատողություն:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ